

ՀՐԱՎԵՐ

ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ

**«Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն» ծրագիր  
Խորհրդատվական ծառայություններ, Անհատ խորհրդատուի ընտրություն  
Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամի /ԳԷՀ/ ծրագրի համակարգող GEF/TA/IS-2016/024**

Հայաստանի Հանրապետությունը /այսուհետ՝ Փոխառուն/ դիմել է ԳԶՄՀ-ին Գլոբալ Էկոլոգիական հիմնադրամից (ԳԷՀ) դրամաշնորհային միջոցներ ներգրավելու նպատակով և տրամադրել է դրա համար անհրաժեշտ փոխանցագրերը «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն» ծրագիրը /այսուհետ՝ ԵԳՖԱՕ/ իրականացնելու համար և նպատակ ունի գումարների մի մասն օգտագործել սույն խորհրդատվական ծառայությունները ձեռք բերելու համար:

**Խորհրդատուի ընտրության նպատակն է՝** ծրագրի իրականացման ընթացքում հողի դեգրադացման համակարգումը, կլիմայական ռիսկերի նվազեցումը և հողերի կայուն կառավարումը գյուղատնտեսության զարգացման մեջ, ինչպես նաև ընդհանուր ծրագրի շահառուների միջև անմիջական համակարգումը կենտրոնական և համայնքային մակարդակում:

Խորհրդատուն պատասխանատու է ներքոնշյալ հիմնական գործառնությունների համար.

- Ստանձնել ԳԷՀ ծրագրի պլանավորման, իրականացման և մոնիթորինգի ընդհանուր պատասխանատվությունը և ղեկավարումը: Սա ենթադրում է ՏԱՊԲ-ի մշակում և մոնիթորինգ, ծրագրի կողմից վարձված ծառայություն մատուցողների և փորձագետների վերահսկողություն:
- Ղեկավարել ծրագիրը տարեկան աշխատանքային պլանի համապատասխան, կանոնավոր կերպով համակարգել ԳԷՀ ծրագրի գործառնությունները, ինչպես նաև ապահովել ԵԳՖԱ ծրագրի հետ համատեղելիությունը:
- Առաջարկել ընտրության չափորոշիչները, հայտարարությունների և պահանջների ձևակերպումը, վերահսկել ազգային և միջազգային խորհրդատուների / ենթակապալառուների աշխատանքը, ապահովելով որակի հսկողությունը և տրամադրելով խորհրդատվական աջակցություն, ըստ անհրաժեշտության:
- Վերահսկել ապրանքների և ծառայությունների գնումները, ուղարկել վճարման հայտերը ԳԶՄՀ հաստատման: Մշակել դրամաշնորհային հայտատուների Առաջադրանքի պայմանները, ուղարկելով դրանք ԳԶՄՀ համաձայնեցման: Կազմակերպել մրցույթները: Ղեկավարել դրամաշնորհային հայտերի ընտրության գործընթացը՝ դաշտային վերլուծությունների և Հայտերի գնահատման հանձնաժողովի ավարտական գնահատման միջոցով:
- Սերտորեն համագործակցել ԾԻԳ, ԳԶՄՀ, ՀՀ Բնապահպանության Նախարարության և հիմնական շահառուների հետ՝ ամբողջ ծրագրի գործառնությունների իրականացման համակարգումն ապահովելու նպատակով:
- Նախապատրաստել և ուղարկել ԳԷՀ-ի հայաստանյան համակարգողին բոլոր պահանջվող հաշվետվությունները և փաստաթղթերը:

Թեկնածուն պետք է ունենա հետևյալ որակավորումները.

- Առնվազն 10 տարվա աշխատանքային փորձ, որից առնվազն 5 տարվա ագրո-էկոլոգիական դրամաշնորհային ծրագրերի հաստատված հաջողակ համակարգման փորձ
- Գյուղատնտեսական կամ բնական ռեսուրսների կառավարման բակալավրի կոչում: Հետբուհական աստիճանի առկայությունն առավելություն է:
- Գյուղական կայուն զարգացմանը նպատակաուղղված կլիմայական ադապտացման աշխատանքային փորձ և գիտելիքներ:
- Ագրո-էկոլոգիական և զարգացման քաղաքականությունների ու օրենսդրության լավ իմացությունը գնահատելի է:
- Ջարգացման ծրագրերի իրականացման իմացություն և փորձ (ծրագրի կառավարում, Մ/Գ, կառավարման և տեխնիկական հմտություններ):
- Անգլերենի բանավոր և գրավոր իմացություն:
- Համապատասխան համակարգչային ծրագրերի իմացություն:

Ծրագիրը իրականացնելու նպատակով ԾԻԳ-ը հրավիրում է իրավասու խորհրդատուներին ներկայացնելու իրենց հետաքրքրության հայտերը վերոնշված ծառայությունների մատուցման համար: Հետաքրքրված խորհրդատուները պետք է ներկայացնեն՝ դիմում ԾԻԳ-ի տնօրենի անունով: Բնքնակենսագրական սեղմագրեր (CVs) անգլերեն և հայերեն լեզուներով, որոնք ներառում են տեղեկատվություն Ծառայությունների իրականացման համար պահանջվող որակավորման և համապատասխան փորձի վերաբերյալ: Ընտրության չափանիշները հետևյալն են.

- Ընդհանուր որակավորումը
- Համապատասխանությունը ծրագրին
- Լեզուների իմացությունը

Խորհրդատուն ընտրվելու է ԳԶՄՀ-ի կողմից 2010թ. սեպտեմբերին հրապարակված Գնումների ուղեցույցով սահմանված ընթացակարգերի համաձայն: Ավելի մանրամասն տեղեկություններ կարող եք ստանալ ստորև նշված հասցեով ժամը 09.00-18.00:

Հետաքրքրության հայտերը պետք է ներկայացնել նշված հասցեով մինչև 2015թ. դեկտեմբերի 21-ը, ժ.18.00:

***ՀՀ ԿԱ “Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի  
իրականացման գրասենյակ” ՊՀ***

***Տնօրեն՝ Աշոտ Վարդանյան***

***Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի 4,6 հարկ:***

***Հեռախոս / Ֆաքս՝ 374 10 – 54 – 65 -10; e-mail: [procurement@raed.am](mailto:procurement@raed.am)***